Andranik Margaryan
Memorial

Անդրանիկ Մարգարյանի 14-րդ հուշամրցաշար
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2024թ. հունվարի 8-16-ը Հայաստանի շախմատի ակադեմիան անցկացնում է Անդրանիկ Մարգարյանի 14-րդ հուշամրցաշարը: Մրցաշարն անցկացվում է շրջանային մրցակարգով՝ 10 մասնակիցներով, 9 խաղափուլով, միջազգային գրոսմայստերի նորմայով:

Ժամակարգը. 90 րոպե առաջին 40 քայլի համար, այնուհետև 15 րոպե՝ մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլին 30 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Մրցանակային ֆոնդը կազմում է 3700 ամերիկյան դոլարին համարժեք ՀՀ դրամ:

1-ին մրցանակ - 1500 ԱՄՆ դոլար
2-րդ մրցանակ - 1000 ԱՄՆ դոլար
3-րդ մրցանակ - 700 ԱՄՆ դոլար
4-րդ մրցանակ - 500 ԱՄՆ դոլար

Հավասար միավորներ հավաքելու դեպքում դրամական մրցանակները բաշխվում են հավասարաչափ, իսկ տեղերը որոշվում են ըստ՝

1. Զոնեբորն-Բերգերի գործակցի,
2. սևերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի,
3. անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/,
4. հաղթանակների առավելագույն քանակի:

Ժամանակացույց.

Բացման արարողություն - 8 հունվարի, 13:00
1-ին տուր - 8 հունվարի, 15:00
2-րդ տուր - 9 հունվարի, 15:00
3-րդ տուր - 10 հունվարի, 15:00
4-րդ տուր - 11 հունվարի, 15:00
5-րդ տուր - 12 հունվարի, 15:00
6-րդ տուր - 13 հունվարի, 15:00
7-րդ տուր - 14 հունվարի, 15:00
8-րդ տուր - 15 հունվարի, 15:00
9-րդ տուր - 16 հունվարի, 11:00
Փակման արարողություն - 16 հունվարի, 18:00

Մրցաշարի անցկացման վայրը՝ Հայաստանի շախմատի ակադեմիա (ք.Երևան, Շևչենկո 34):

Մասնակցության վճար.

2400 - 2500 - վարկանիշ ունեցող շախմատիստների համար - 150 ԱՄՆ դոլար
2300 - 2400 - վարկանիշ ունեցող շախմատիստների համար - 300 ԱՄՆ դոլար
2250 - 2300 - վարկանիշ ունեցող շախմատիստների համար - 400 ԱՄՆ դոլար

Գիշերակացը ակադեմիայի հյուրատանը սնունդով /մեկ անձի համար, օրական/ - 40 ԱՄՆ դոլար:

Մրցաշարի համակարգող: Մերի Թաշչյան
E-mail: tournaments@chessacademy.am Tel.: +374 10-448473, +374 55 630640